ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԶԳՏՈՒՄՆԵՐԸ 1768—1774 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Վ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Թուրքիայի և Ռուսաստանի միջև 1768 թ. սկսված պատերազմում որպես Ռուսաստանի բնական դաշնակիցներ էին հանդես գալիս թուրքական բռնատիրության ներքո հեծող ժողովուրդները։ Իմերեթի թագավոր Սոլոմոն II-ը և Քարթլ-Կախեթի թագավոր Հերակլ II-ը անգամ պատրաստ էին զենք բարձրացնելու Թուրքիայի դեմ։ Դրա համար վրաց քաղաքական գործիչներն անհրաժեշտ էին համարում Ռուսաստանից ստանալ ռազմաֆինանսական օգնություն՝ որպես կարևոր նախապայման ինչպես ներքին կենտրոնախույս ուժերը զսպելու, լեզգի ֆեոդալների ասպատակությունները վերացնելու, այնպես էլ Վրաստանից Թուրքիայի ղավթած մարզերը ետ վերցնելու համար[1]։

Պատերազմելով թուրքերի դեմ, վրացիները և օսմանյան բռնատիրության ներքո հեծող մյուս ժողովուրդները պիտի թշնամու որոշ ուժեր գամեին պատերազմի Կովկասյան ճակատում, և դրանով իսկ պատերազմի գլխավոր՝ եվրոպական մասում Թուրքիային զրկեին մեծ ուժեր կենտրոնացնելու հնարավորությունից։ Դա միաժամանակ կնպաստեր Ռուսաստանի ասաջ ծառացած խնդիրների լուծմանը։ Այսպես ծագեց ռուս-վրացական դաշինքն ընդդեմ Թուրքիայի, և Վրաստանը (Իմերեթի, Քարթլ-Կախեթի թագավորությունները) պատերազմի մեջ մտավ Թուրքիայի դեմ։

Կրտսեր դաշնակիցներին օգնելու և խրախուսելու միտումով ռուսական կառավարությունը որոշեց զորախումբ ուղարկել Վրաստան։ 1769 թ. հոկտեմբերի 22-ին Եկատերինա II-ը գեներալ մայոր կոմս Գոտլիբ-Կուրտ-Հայնրիխ Տոտլեբենին նշանակեց այդ զորախմբի հրամանատար, սակայն Տոտլեբենը չկատարեց իր պարտականությունները և դրանով իսկ խոչընդոտեց ռուս-վրացական զորքերի ռազմական գործողություններից սպասվող դրական արդյունքները։

1769 թ. օգոստոսի 26-ին 600 հոգիանոց ռուսական զորախումբը անցավ Կովկասյան լեռնաշղթան և կանգ առավ Մլեթի գյուղում (Դուշեթի շրջան)։ Ռուսական կառավարությունն ընդառաջելով Հերակլ II-ի խնդրանքին՝ այդ զորախմբի թիվը հասցրեց 3767-ի[2]։

Ինչպես նկատվել է, ռուսական զորամասերի անցումը Դարյալի կիրճով և ժամանումը Վրաստան մեծ տպավորություն գործեց տեղի և շրջակա ազգաբնակչության վրա[3]։

---

[1] Ն. Ծերժենիշվիլի, საქართველოს ისტორიის საკითხები, ტ. 2, თბილისი, 1965, էջ 217։

[2] *Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ, ֆոնդ՝ Ռուսաստանի հարաբերությունները Վրաստանի հետ (այսուհետև՝ ՌԱՔԱ, ֆ. ՌՀՎ) 1768—1771 թթ., գ. 6, թ. 72, տե՛ս* նաև О. П. Маркова, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, М., 1966, էջ *139։*

[3] О. П. Маркова, *նշվ. աշխ., էջ 139։*

Տոտլեբենի գլխավորած զորախմբի մի մասը (1200 մարդ) 1770 թ. մարտի 17-ին վրացական զորքի հետ (7 հազար մարդ և 3 հրանոթ), Հերակլ II-ի հրամանատարությամբ շարժվեց Ախալցիխեի փաշայության դեմ։ Ապրիլի կեսերին ռուս-վրացական զորքը պաշարեց Ածզուրի բերդը։ Սակայն մարտը դեռ նոր էր սկսվել, երբ Տոտլեբենը իր հրամանատարությանը ենթակա ռուսական զորքով ետդարձի ճանապարհը բռնեց։ Դա շփոթություն առաջ բերեց վրաց զորքի մեջ, իսկ թշնամին սրտապնդվեց, դուրս եկավ բերդից և հարձակվեց վրաց զորքի վրա, որը, սակայն, անակնկալի չեկավ և ստիպեց նրանց ծանր կորուստներ տալով պատսպարվել բերդում։

Հաջորդ օրը վրաց զորքը շարժվեց դեպի Ասպինձա, հանդիպեց Ախալքալաքից եկած 1500 հոգիանոց թուրքական զորախմբին։ Տեղի ունեցած ճակատամարտում (1770 թ. ապրիլի 20) թուրքական զորախումբը ջախջախվեց, թողնելով մոտ երեք հարյուր սպանված։ Մնացածները կամ Կուր գետում խեղդվեցին, կամ գերի հանձնվեցին։ Փրկվեցին մի քանի տասնյակ մարդ։

Սակայն գեներալ Տոտլեբենի ուխտադրուժ վարքագիծն ըստ էության Հերակլ II-ին խանգարեց օգտվելու այդ հաղթանակից, և ռազմական գործողությունները զարգացնելու փոխարեն, վրաց զորքը ետ քաշվեց դեպի Քարթլի։ Իրավացի է վրաց պատմաբան Վ. Գ. Մաճարաձեն, գտնելով, որ «Տոտլեբենը փաստորեն վիժեցրեց 1770—71 թթ. ռազմական կամպանիան Վրաստանի ճակատում, որով Ռուսաստանին ավելի մեծ վնաս հասցրեց, քան 1761 թվականին»[4]։

1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմը թուրքական լծի տակ հեծող հայերի, ասորիների և եզդիների շրջանում առաջ էր բերել ազատագրական ձգտումներ։ Արխիվային վավերագրերը վկայում են թուրքական լծի դեմ համատեղ պայքարելու այն ցանկության մասին, որով համակվել էին այդ ժողովուրդները հիշյալ պատերազմի տարիներին։ 1770 թ. հունվարի 2-ին Հերակլ II-ը ռուսական արքունիքին տեղեկացնում է. «օսմանցու տիրույթում՝ Բայազետից այն կողմը բնակվող ասորի քրիստոնյաները, որոնք մեծաքանակ մի ժողովուրդ են, ինչպես և դրա շրջակայքում բաղում քրիստոնյա հայեր կան, որոնք մշտապես մեզ են դիմում, և մենք խոստացել էինք նրանց, եթե աշնանը պայմանավորված չափով զինվոր (ռուսական զորք— Վ. Մ.) գար, կմիանային մեզ և օգուտը մեծ կլիներ»[5]։

Հերակլ II-ի հետ դաշնակցելու և թուրքերի դեմ պայքարելու պատրաստակամություն է հայտնել նաև Բայազետի շրջակայքում բնակվող եզդիների ցեղապետ Զորան-Օղլին, որը 1770 թ. սեպտեմբերի 23-ին Հերակլ II-ին հղած նամակում հավաստում է, որ ստացել է վրաց թագավորի գրավոր առաջարկը թուրքերի դեմ համատեղ պայքարելու մասին, որին լրիվ համաձայն է և միայն խնդրում է տալ հուսատու երաշխիք Հերակլ II-ի հովանավորության ներքո իրենց վերցնելու մասին[6]։

---

[4] Ց. Գ. Մաճարաձե, ասնոնձոն ծրժոլա, տՃՈՐՈՍՈ, 1957, էջ 113։

[5] ՌԱՔԱ, ֆ. ՌՀՎ, 1768—1771, դ. 6, թ. 303։

[6] ՌԱՔԱ, ֆ. ՌՀՎ, 1769—1776, դ. 12, թ. 125—126։ Նամակի վրա Հերակլ II-ը նշել է. «Այս Զորան-օղլին ազգությամբ եզդի է. սա ոչ քրիստոնյա է, ոչ էլ մահմեդական, կողմնակից է առավելապես քրիստոնյաներին, թշնամի՝ մահմեդականներին։ Սա ևս կամենում է միավորվել մեզ հետ, քանի որ սրանք նույնպես խիստ ճնշվում են մահմեդականներից»։ Ասորի-

1770 թ. մայիսի 1-ին Մոուրավովը[7] ռուսական արքունիք հղած զեկուցագրում նկարագրում է այն ջերմ ընդունելությունը, որ ցույց է տվել Ախալքալաքի քրիստոնյա (հավանաբար հայ) ազգաբնակչությունը վրաց զորքին։

1770 թ. ապրիլի «22-ին Հերակլ II-ը ժամանեց Ախալքալաքի մոտակայքը, ուր մազապուրծ թշնամին գիշերով ներխուժելով և մոտ 70 մարդ քրիստոնյաներից կոտորելով, փախել է էրզերում։ Ախալքալաքի բնակիչները, գրեթե բոլորը, քրիստոնյաներ են, որոնք վրաց զորքին դիմավորում էին մեծագույն բերկրանքով և աղերսում Հերակլին իրենց էլ վերցնել պաշտպանության ներքո և բոլորին բնակեցնել Վրաստանում, հավաստելով, որ իրենք ի վիճակի են վրաց զորքը պարենավորել մի քանի ամիս շարունակ...»[8]։ Սակայն Հերակլ II-ը Տոտլեբենի ստեղծած իրավիճակի պատճառով ոչ միայն չի կարողանում կատարել տեղի ազգաբնակչության խնդրանքը, այլև հարկադրված դադարեցնում է ռազմական գործողությունները և շտապ շարժվում Քարթլի։

Բերված վավերագիրն ուշագրավ է՝ առաջին հերթին Ախալքալաքի քրիստոնյա ազգաբնակչության՝ վրաց զորքի նկատմամբ ունեցած խանդավառ վերաբերմունքի առումով։

1771 թ. հունվարի 25-ին ռուսական արքունիք հղած իր մի այլ զեկուցագրում վերոհիշյալ Ա. Մոուրավովը նշում է. «Բայազեդից այն կողմ գտնվող ասորիները, որոնք քրիստոնյա են համարվում, ինչպես և Երևանում բնակվող հայերը գրում են Հերակլ արքային և հավատացնում, որ երբ վերջինս նրանցից պահանջի գալ, ապա իրենք կգան և քրիստոնյաների թշնամի թուրքերի դեմ իրենց անձը չեն խնայի»[9]։

1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին թուրք-պարսկական հարստահարիչներից կեղեքվող հայ, ադրբեջանցի, ասորի, եզդի ազգաբնակչությունը ոչ միայն համակրում էր ռուս-վրացական կողմին և պատրաստակամություն հայտնում զինակցելու թուրքերի դեմ մղվող պայքարում, այլև Վրաստանում բնակվող հայերը և ադրբեջանցիները վրաց բանակի կազմում անմիջական մասնակցություն են ունեցել ռազմական գործողություններին։ Այս իրողությունը հավաստվում է Հերակլ II-ի ստորագրած վավերագրով, ուր ասված է. «1770 թ. մեր հրամանով զորքը օսմանցու երկիրը կռվելու գնաց երեք անգամ։ Առաջին անգամ զորախումբը բաղկացած էր 500 անձից, որոնք մեծ մասամբ թաթարներ (ադրբեջանցիներ —Վ. Մ.) էին, իսկ փոքր մասն էլ՝ վրացիներ։ Երկրորդ անգամ գնացին Մանթաշ և Սարուխան անվամբ հայերը 400 անձով, իսկ երրորդ արշավանքը, որին մասնակցում էր 700 մարդ, գլխավորում էին Գեորգի և Ավթանդիլ Մելիքով իշխանները։ Այս զորախմբի մեծ մասը բաղկացած էր վրացիներից, որոնց հետ կային

ների, եզդիների և այլոց ազատագրական միտումները, հայերի ու վրացիների հետ միավորվելու ձգտումները ոչ թե անցողիկ մտայնություն, այլ քաղաքական կայուն համոզմունք էին։ Տե՛ս Վ. Կ. Ոսկանյան, Վ. Մ. Մարտիրոսյան, Նոր վավերագրեր 1720-ական թվականների հայ ազատագրական շարժման վերաբերյալ («Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 4, էջ 201)։

7 Ա. Մոուրավովը Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիայի ծառայող էր և այդ տարիներին գտնվում էր Իմերեթի թագավոր Սոլոմոն II-ի մոտ։

8 ՌԱՔԱ, ֆ. ՌՀՎ, 1768—1771, գ. 6, թ. 320—321բ։

9 Նույն տեղում, թ. 362բ։

նաև որոշ թվով թաթարներ»[10]։ Այնուհետև Հերակլ II-ը նկարագրում է Աշոցքի ճակատամարտում վրացիներից, հայերից և ադրբեջանցիներից բաղկացած զորախմբերի տարած հաղթանակը թուրքական զորամասի դեմ։ «Սրանց դեմ (վրաց զորաբանակի— Վ. Մ.) Ախալցիխեից զորք ելավ։ Մեր երրորդ զորախումբը, որ ուղարկված էր մեր հրամանով Մելիքով իշխաններ Գեորգիի և Ավթանդիլի գլխավորությամբ, հրազենով հանդերձ, թշնամու զորախմբին հանդիպեց վրացերեն Աբոցի (Աշոցք— Վ. Մ.), թուրքերեն Ղաիղուլի կոչվող վայրում, որը սահման է Քարթլիի և Ախալցիխեի միջև։ Նշված վայրում մարտի բռնվեցին թշնամու հետ և, աստծո ողորմությամբ, անվանի հաղթանակ տարան։ Թշնամուց 150 հոգի սպանեցին և 130 էլ գերի վերցրին։ Մեր զորքերը այս տարի բազում անգամ թշնամու երկրից գերի և ավար են բերել»[11]։

Այն ազատագրական ակնկալությունները, որ ունեին թուրք-պարսկական լծի տակ տառապող ժողովուրդները 1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին չիրականացան, սակայն դրանք նաև հավաստում են, որ այդ ժողովուրդների ազատագրական պայքարի գործիչները ամենևին էլ չէին հիասթափվել և մնում էին այն համոզման, որ, ի վերջո, միմիայն Ռուսաստանի ռազմա-քաղաքական օգնությունն ու թուրք-պարսկական զավթիչների դեմ ռուսական զենքի հաղթանակն են լինելու իրենց ազատագրության միակ գրավականը։

ОСВОБОДИТЕЛЬНЫЕ УСТРЕМЛЕНИЯ ЗАКАВКАЗСКИХ НАРОДОВ В ГОДЫ РУССКО-ТУРЕЦКОЙ ВОЙНЫ 1768—1774 ГГ.

В. М. МАРТИРОСЯН

Резюме

Вступление Грузии в русско-турецкую войну 1768—1774 гг. в качестве союзницы России, а также появление русского военного корпуса в Грузии придали новую силу освободительным устремлениям армян, ассирийцев и езидов.

Их представители неоднократно обращались к царю Картли-Кахети Ираклию II с просьбой оказать им помощь в борьбе против турецких угнетателей, всегда подчеркивая при этом готовность к совместной вооруженной борьбе против общего врага, залогом успеха в этой борьбе считая военно-политическую поддержку России. Многие факты свидетельствуют также об участии в военных действиях против турок живущих в Грузии армян и азербайджанцев в составе грузинского войска. Следует особо отметить битву под Ашоцком, где грузинское войско под командованием известных князей Георгия и Автандила Меликовых наголову разбило крупный турецкий военный отряд.

Несмотря на то, что освободительные устремления закавказских народов тогда не были осуществлены, эти народы продолжали связывать свои освободительные чаяния и стремления с военно-политическими успехами России.

10 Նույն տեղում, թ. 256։

11 Նույն տեղում։